

1852

h-56

4997-5005

28

z-56

2010


11


84

1

11.01.1996

№ 2001







284

9-94

ԲՐՕԹԷՍԹԵՆԴԻՆԵՐՈՒՆ

ՀԵՒԵՏԻՐ

ՆՈՐ ԿՐՕՆԻ ԿԵՐՊՈՒԵԼՈՒՆ

ՎՐԵՅ

---

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

---

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա • Գ • ՉԸՐՉԸԼԻ

1855

С. ПЕТЕРБУРГЪ

№ 2343

С. ПЕТЕРБУРГЪ

№ 2343

С. ПЕТЕРБУРГЪ

78133 - Ул.



1601-87



ՆՈՐ ԿՐՕՆՔ ԿԱՐԾՈՒԵԼՈՒՆ ՎՐԱՅ

Բրօթէսթանդներուն հաւատքը շատ հեղ կը պախարակուի, իբր թէ նորաձար բան մըն է, ու Լուտերի և Կալվինի օրը սկզբնաւորութիւն ունեցեր է: Եւ ձեռնարկութեան դէմ պատասխան տալը շատ դիւրին բան է, և շատնցուընէ ասոր պատասխանը տրուած է: Ենցած դարին մէջը Ռէնուլթ անունով Ֆրանչիսկեան կրօնաւորին մէկը, որ առաջ Պապական քարոզիչ էր ու ետքը Լօնտրայի մէջ Բրօթէսթանդ քարոզիչ եղաւ, աս բանը կը բացատրէ իրեն՝ Բրօթէսթանդներուն հասարակին հնդկներն և հայրենիներն որոնք ըստուած գիրքին մէջը: Ումէնք ալ ան գիրքին մէկ քանի հատուածը հոս գրենք:

Բրօթէսթանդներուն հասարակին հնդկներն և հայրենիներն:

Բրօթէսթանդներուն հաւատքին մէջը մէկ բան մը միայն նոր է, այսինքն՝ անոր տրուած անունը: Եւ անունը անոր տրուեցաւ ան բողոքին համար, որն որ Վերմանիայի շատ իշխանները ու քաղաքները Պապին դէմ ըրին, ու ան բողոքին մէջը իրենց հաւատքին դաւանանքը յայտ-

նեցին • և աս պատճառով իրենց թշնամիները այն օրէն անոնց Բրօթէսթանդ անունը դրին • բայց արդարև հաւատքի վիճաբանութեան մէջը անունները ոչինչ կը սեպուին , միայն վարդապետութիւնները կը նայուին : Մեր հաւատքը նոր չըլլալէն զատ , Եստուածաշունչին չափ հին է • ինչու որ անիկայ բոլորովին Եստուածաշունչէն է : Ոմանք՝ Բրօթէսթանդ անունը Բարեկարգութեան ժամանակէն գործածուիլ սկսելուն համար իբրև մէկ զօրաւոր փաստ մը սեպելով , կ'ըսեն թէ մեր վարդապետութիւններն ալ նոյն ժամանակէն սկսեր են • ու տգէտ և ռամիկ ժողովուրդին խորամանկութիւնով մը կը հարցունեն , թէ Բարեկարգութենէն առաջ Բրօթէսթանդներուն վարդապետութիւնները ո՞ր էին : Որովհետև շատ մարդիկ ժամանակ չունին աս նիւթերուն վրայօք քննութիւններ ընելու և տեղեկութիւն ստանալու , ան պատճառով շուտ մը աս հարցմունքէն կը շփոթին • ու շատերն ալ պատրաստ աւարի մը պէս աս խաբէական ձեռնարկութեան որոգայթէն կը բռնուին ու կը խաբուին :

Ես հեղինակը չ'պնդեր , ու չուզեր ապացուցանել թէ Բրօթէսթանդ անունը հին անուն է • մանաւանդ Բրօթէսթանդներուն թշնամիներուն հետ մէկ բերան կը հաստատէ , թէ աս անունը տասնուվեցերորդ դարէն առաջ չ'կար • բայց ամէն ժամանակ Բրօթէսթանդ ըսուած հաւատքին պէս հաւատք մը կար , ու նոյն հաւատքը դաւա-

նողները շատ համարձակութիւնով միշտ ամէն մոլորութեան դէմ կեցեր, այսինքն Բրօթէսըրեր են, թէ իրենց զատուելովը և թէ իրենց վարքովը ու ընթացքովը: Ու անոնք Բրօթէսութանդ էին. այսինքն՝ անոնք որ առաջին անգամին Անտիոքի մէջ Քրիստոսեայ ըսուեցան, ու Յակոբի ժամանակը՝ Իսրայէլացի, ու ջրհեղեղէն առաջ՝ Որդիկ Աստուծոյ կոչուեցան. և այսպէս ինչուան առաջին մարդը կը հասնինք, որն որ աս Աստուածային հաւատքին ծնանիլը տեսաւ:

Աս ճշմարտութիւնը ապացուցանելու համար, մենք հիմա Բրօթէսութանդներուն կրօնքին Վարդապետութիւնը, Պաշտամունքը, Բարոյականութիւնը և Արարողութիւնը պիտի քննենք: Առջի իրերին մէջը՝ որոնք հաւատքին էութիւնն են, աշխարհքիս սկիզբէն ՚ի վեր բնաւ մէկ փոփոխութիւն մը պիտի չ՛գտնանք. չորրորդին մէջը պիտի տեսնանք քանի մը փոփոխութիւններ, որն որ հաւատքին ամենեւին մնաս մը չ՛տար, ինչպէս որ մէկ մարդ մը միշտ մի և նոյն է, թէև իրեն զգեստը փոխելու ըլլայ:

Բրօթէսութանդներուն վարդապետութիւնը հին ըլլալը:

Աս վարդապետութիւնը երկու գլխաւոր նպատակ ունի. Աստուած, ու Յիսուս Քրիստոս: Բրօթէսութանդներուն հաւատքը կը սորվեցընէ:

Թէ միայն մէկ Եստուած մը կայ . և թէ աս Եստուածը՝ Յաւիտենական, Եմենակարող, Ենհուն, Երդար ու Ողորմած է . և թէ անիկայ աշխարհքս ստեղծեր է ու կը կառավարէ, այնպէս որ՝ աշխարհիս մէջը պատահած պինտ պղտիկ դիպուածը անդամ անոր նախախնամութենէն կախում ունի : Երդեօք հարկաւոր է որ Սուրբ Գիրքէն անթիւ վկայութիւններ բերենք, որպէս զի հաստատենք թէ աս ճշմարտութիւնները աշխարհիս չափ հին են :

Երդեօք Բրօթէսթանդներուն հաւատքին աս ճշմարտութենէն աւելի հին բան կայ՝ որ կ'ըսեն թէ Եստուծոյ արդարութիւնը երկու նպատակ ունի, չարերուն պատիժը, ու արդարներուն վարձքը : Երդեօք միայն կալվինի ժամանակէն՝ ի վեր հաւտացինք, թէ «Ենզգամին յաջողութիւնը քիչ ժամանակ կը տևէ, . . . թէև . . . զլուխը ամպերուն հասնի, իր աղբին պէս յաւիտեան պիտի ոչնչանայ, ու զինքը տեսնողները պիտի ըսեն . Ո՛ր է անիկայ : Յոբ . Ի . 5 — 7 : Բայց անկէց ետքը Ինչ պիտի ըլլայ, արդեօք պիտի ոչնչանայ : Բրօթէսթանդները աս հարցմունքին Յօբին ժամանակը տրուած պատասխանը պիտի տան : «Երազի պէս պիտի թռչի, ու պիտի չ'գտնուի . . . Եստուած իր սաստիկ բարկութիւնը անոր վրայ պիտի խրկէ . ու անձրևի պէս անոր վրայ պիտի թափէ՝ . . . երկինքը անոր յանցանքը պիտի յայտնէ, երկիրն ալ անո՞ր դէմ պիտի ելլէ, . . . ու չ'փչուած կրակը զա՛յ

նիկա պիտի լափէ" : Յոթ . Ի . 8 , 23 , 27 , 26 :  
Յորի ժամանակը ամէն հաւատացեալները Ես-  
տուծոյ ողորմութենէն ինչ որ կը յուսային ,  
Բրօթէսութանդներն ալ այսօր նոյն բանը կը յու-  
սան . "Վասն զի գիտեմ" , կ'ըսէր անիկայ , "որ  
իմ Փրկիչս ողջ է , . . . իմ մարմնովս զԵստուած  
պիտի տեսնեմ" : Յոթ . ԺԹ . 25 , 26 :

Իսրայէլացիք ալ Բրօթէսութանդներուն պէս  
յարուժեան կը հաւտային , ու գիտէին որ "Հո-  
ղը երկիրը պիտի դառնայ՝ առջի եղածին պէս :  
Ու հոգին Եստուծոյ պիտի դառնայ , որ զանիկայ  
տուաւ" : Դող . ԺԻ . 7 : Մեր բռնած ճամբան  
ալ ասիկայ է . արդեօք ասկէց աւելի հին բան  
կայ :

Բրօթէսութանդներուն հաւատքին երկրորդ նը-  
պատակը Յիսուս Քրիստոս է . վասն զի , "Ես  
է յաւիտենական կեանքը , որ ճանչնան քեզ  
մի միայն ճշմարիտ Եստուածդ , ու Յիսուս Քր-  
իստոսը՝ որն որ դուն խրկեցիր" : Յովհ . ԺԷ .  
3 : Մենք կը հաւտանք թէ Եդամէն ինչուան  
մեր օրը մարդ մը չ'փրկուեցաւ առանց հաւտա-  
լու Եստուծոյ ու մարդոց մէջ եղող աս աստ-  
ուածային Միջնորդին : Վասն զի աշխարհքիս  
սկիզբէն 'ի վեր յայտնուած էր , թէ միայն անի-  
կայ բոլոր աշխարհքիս մեղքերուն համար քաւու-  
թիւն պիտի ըլլայ : Թէպէտև անիկայ միայն Հրէ-  
աստանի մէջ , ու միջին դարերուն երևցաւ , բայց  
իրեն մարդեղութեանը ու մահուանը զօրութիւ-  
նը ամէն դարերուն մէջը ամէն ժողովուրդներ

րուն՝ Հեթանոսներուն, Հրէաներուն ու Քրիստոնեաներուն մէջը տարածեց : «Քրիստոս», ըսաւ Յովհաննէս, «աշխարհքիս սկիզբէն 'ի վեր մորթուած Քառն է» : Յայտ. Ժ. 8 : Այնպէս որ Փրկչին ապագայ զոհը՝ որ մարդոց մեղքը պիտի քաւէր, հաւատացելոց համար աշխարհիս սկիզբէն ունեցաւ նոյն զօրութիւնը, որն որ ետքը ունեցաւ՝ երբոր ճշմարտապէս մորթուեցաւ, «Մէկ անգամ մը դարերուն վերջը իր անձին պատարագովը յայտնուեցաւ՝ մեղքը մէկդի ձգելու համար» : Եբր. Թ. 26 :

Աշխարհիս սկիզբէն հաւատացեալները հաւատքով տեսան ապագայ ժամանակին մէջը անիկայ, որն որ մենք անցածին մէջը կը տեսնանք : Ու Յիսուս Քրիստոս աս միտքով կ'ըսէր «Երբհամ . . . իմ օրս . . . տեսաւ, և ուրախացաւ» : Յովհ. ք. 56 : Ան փրկութեան խորհուրդը բնաւ վայրկեան մը չ'վերջացաւ : Առաքելոց սորվեցուցածը մարդարէներն ալ առաջուց զրուցած էին, թէ Աստուած աշխարհիս ստեղծմանէն 'ի վեր մարդոց համար փրկութեան մի և նոյն հիմն հաստատեր է : Յիրաւի շնորհքը՝ որով ամէն հաւատացեալները արդարացան, Մեսիային դալստեամբը աւելցաւ, բայց չէ թէ ան ժամանակէն սկսաւ :

Աս ողորմութեան խորհուրդը ամէն ժամանակ այնչափ զօրաւոր եղաւ, որ խոստումի ժամանակը՝ անոր հաւտացողները անոնցմէ պակաս չ'շահեցան, որոնք որ անիկայ առին՝ տրուելէն ետքը :

Նոր Կտակարանին հաւատացեալները կը ճանչնան Յիսուս Քրիստոսը, իբրև անցած դարերուն ցանկալին, ու Հին Կտակարանին հաւատացեալները՝ իբրև դալու դարերուն փառքը: Ու ինչպէս առտու և իրիկունը մէկ օր մը կը կազմեն, այսպէս ալ երկու Կտակարանին ժողովուրդները եկեղեցւոյն մի և նոյն մարմինը ու մի և նոյն հաղորդութիւնը կը բաղադրեն: Իսաի-թին ժամանակէն կ'ըսէին՝ Եստուծոյ Որդւոյն վրայ խօսելով, «Երանի՛ ան ամենուն՝ որ անոր կը յուսան»: Սաղ. ք. 12: Սուսէսին ժամանակը անիկայ կը սպասուէր մէկ մեծ մարդարէի մը պէս, որն որ Եստուած «Իսրայէլացւոց մէջէն» պիտի հանէր, ու Եստուած «իբ խօսքերը անոր բերանը պիտի դնէր»: ք Օրէն. Ժբ. 18: Յակոբին ժամանակը անոր կը յուսային որ պիտի գայ, «Ու ժողովուրդները անոր պիտի նազանդին»: Ծանօ. խթ. 10: Երբ համին ժամանակէն անոր գալստեանը կը ցանկային, վասն զի «Երկրի բոլոր ազգերը անով պիտի օրհնուէին»: Ծանօ. Ժբ. 3: Ու թէ որ ինչուան Եդամը ելլանք, չն՞ք կրնար ըսել թէ փրկութիւնը անկէ կը սպասուէր, վասն զի «Օձին գլուխը անիկայ պիտի ջախջախէր»: Ծանօ. ք. 15:

Ուստի Բրօթէսթանդներո ւն հաւատքին սկզբնաւորութիւնները գտնալու համար՝ պէտք է որ աշխարհքիս առաջին դարերը ելլանք: Ու ինչպէս որ աշխարհքիս ստեղծմանէն ՚ի վեր կը տեսնանք

մէկ Աստուած մը, որուն որ առաջին մարդոյն ազգատոհմը զոհեր կը մատուցանէր, «որն որ Եբրահիմը օրհնեց», «Նոյը ջրհեղեղէն ազատեց, Եղամբը երկրի հողէն կազմեց, այնպէս ալ ան ժամանակէն մարդկային ցեղին փրկուելուն պատճառ ու հիմն մէկ Փրկիչ մը կը տեսնանք: «Ուրիշ մէկով մը փրկութիւն չ'կայ. ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չ'կայ երկինքին տակը մարդոց մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուելու»: Գործ. Գ. 12:

Մենք կը հաւտանք նաև՝ թէ Յիսուս Քրիստոսի վրայ մէկ աստուածային բնութիւն մը ու մէկ մարդկային բնութիւն մը կայ միացեալ ու անբաժանելի. այնպէս որ անիկայ ճշմարտապէս Աստուած ու մարդ է. ու աս վարդապետութենէն աւելի հին բան չ'կայ: Եսայի անոր Աստուածութիւնը կը յայտնէ, երբոր կ'ըսէ թէ անոր անունը աս է. «Սքանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան, (Եսայ. Թ. 6.) Լճմանուէլ՝ որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ»: Սաղմ. Թ. 23: Ենոր մարդկութիւնն ալ կը յայտնէ, երբոր անիկայ կը կոչէ «Վշտաց տէր»: Եսայ. Ժ. 3: Գաւիթ կ'ըսէ թէ անիկայ «Որդ ու մարդոց մէջը քամահրուած է»: Սաղմ. Ի. 6: Ենիկայ Աւետարանին մէջը կոչուեցաւ «Սարմնոյ կողմանէ Գաւիթի սերունդէն»: (Հաղմ. Թ. 3:) «Ամէն կերպով փորձը առած է մեզի նման, բայց առանց մեղքի»: Եբր. Գ. 15:



Միթէ նոյն ինքն Եստուած աշխարհքիս սկիզբը  
 Եղամին իյնալէն ետքը չըսաւ թէ «Կնկան սե-  
 րունդը կամ զաւակը օձին գլուխը պիտի ջախ-  
 ջախէ» : Ծանոյ . 7 . 15 : Ու ասանկով ամէն  
 ժամանակ հաւատացեալները հաւտացին ան բա-  
 նը որն որ Բրօթէսթանդները կը հաւտան , թէ  
 մարդ մը չ'կրնար փրկուիլ թէ որ Յիսուս Քրի-  
 ստոսի չ'հաւտայ . և թէ աս Փրկիչը Եստուած  
 և մարդ է , և թէ անոր արիւնովը մարդ իր փր-  
 կութիւնը կը գտնայ : Եղամ ու անոր զաւակնե-  
 րը աս պատուական մահը կը տեսնային անա-  
 սուններուն մահուան մէջը , որն որ Եստուած ա-  
 նոնց հրամայեց իրեն զոհելու մեղքի համար : Եւ  
 աս զոհերը պատուիրած ատենը անտարակոյս ա-  
 նոնց յայտնեց թէ աս պատուիրանին նպատակը  
 ինչ էր . և չ'թողուց անոնք ան մեծ մոլորու-  
 թեան մէջը թէ անասունի մը արիւնը գաղտնի  
 զօրութիւն մը ունենայ՝ անոնց հոգիները ա-  
 մէն մեղքերէն մաքրելու : Ու ասիկայ շատ հաւա-  
 նական բան է . ասոր համար որ Յիսուս Քրիս-  
 տոս Սուրբ Հոգիին ձեռքովը ըսուեցաւ «Եշ-  
 խարհքիս սկիզբէն 'ի վեր մորթուած Գառնուկ» :  
 Յայտ . Ժ . 8 : Միթէ մարգարէից ժամանակը  
 չէի՞ն գիտեր՝ ինչ որ մենք աւետարանիչներէն  
 սորվեցանք Յիսուս Քրիստոսի ծննդեանը , կե-  
 նացը , մահուանը , յարութեանը և համբարձ-  
 մանը , ու Հոգւոյն Սրբոյ խրկուելուն վրայօք :  
 Յակոբին ժամանակէն 'ի վեր զրուցուած էր թէ  
 անիկայ որ ցեղէն պիտի ծնանի , և թէ անիկայ

դալէն ետքը Իսրայէլացւոց թաղաւորութիւնը ու նաև զո՛հ ըլլալը անյայտ պիտի ըլլան : Եստուած ամէն ժամանակներուն փրկութեան միևնոյն հիմն տուաւ :

Պիտի ըսեն թէ Յիսուս Քրիստոս չեկած՝ Երրորդութիւնը ճանչցուած չէր . այսինքն՝ մէկ Եստուած մը իրեք անձերով միացած : Երրորդութիւն ու անձն բառերը կրնան նոր ըլլալ . բայց Բրօթէսթանդներուն հաւատքը անոնց ինչ նշանակութիւն որ կու տայ՝ ամէն ժամանակ նոյն նշանակութիւնը ընդունուած է : Թէ որ դպրոցականները աս նիւթիս վըայօք իրենց դիրքերը չ'հասկըցուելու և մութ խօսքերով լեցուցեր են ալ , այսու ամենայնիւ անոնք նոր վարդապետութիւն մը նարած չեն , միայն հինը մթընցուցեր են : Նոյն ինքն Յիսուս Քրիստոս Եռաքեալներուն պատուիրեց «մկրտելու յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» : Սաղմ . 19 : Յովհաննէս ըսաւ թէ «Սկիզբէն էր բանը , . . . ամէն բան անով եղաւ» : Յովհ . 1 , 3 : Ու Գաւիթ կ'ըսէ թէ «Տէրօջը Խօսքովը երկինքը ստեղծուեցաւ» : Սաղմ . 17 , 6 : Ուրեմն նոր չէ ան վարդապետութիւնը , որն որ մեզի կը սորվեցունէ թէ Եստուածութեան մէջը մէկ Որդի մը , մէկ Բան մը պաշտելու է :

Նաև Հոգւոյն Սրբոյ ալ միշտ երկրպագութիւն եղած է : Գաւիթին աղօթքը առ Եստուած ասիկայ էր , «Քու Սուրբ Հոգիդ ինձմէ մի՛ հաներ» : Սաղմ . 85 . 11 : Եսայի մարգարէն Սուրբ

Տողինն Քրիստոսի վրայ հանգչելը տեսնելով  
 դրեց, «Ենոր վրայ պիտի հանգչի Տէրոջը Տո-  
 գին» : Եսայ . ԺԳ . 2 : Բրօթէսթանդներուն վար-  
 դապետութիւնը կը սորվեցունէ, թէ Արդին  
 Հօրմէն ծնած է, և Տողին Սուրբ՝ Հօրմէն ու  
 Արդին կը բղխի : Միթէ՞ Հին Կտակարանին  
 հաւատացեալները չ'լսեցին՝ որ նոյն ինքն հայ-  
 րը իրեն Արդւոյն կ'ըսէ, «Դուն իմ Արդիս ես .  
 Ես այսօր քեզ ծնայ» : Սաղ . ք . 7 : Յիսուս  
 Քրիստոս կը սորվեցունէր թէ Տողին Սուրբ  
 Հօրմէն կը բղխի . քանզի իր աշակերտներուն  
 կ'ըսէր, «Ես ալ Հօրը պիտի աղաչեմ . և ուրիշ  
 Միսիթարիչ մը պիտի տայ ձեզի», Յովհ . ԺԳ .  
 16, «Են ճշմարտութեան Տողին՝ որն որ Հօրմէն  
 կ'ելլէ» : Յովհ . ԺԵ . 26 : Եւ ուզելով անոնց  
 սորվեցունել թէ ինքը կարողութիւն ունի նոյն  
 Տողին տրամադրելու, անոնց ըսաւ, «Թէ որ  
 երթամ, անիկայ ձեզի կը խրկեմ : . . . Իմի-  
 նէս պիտի առնէ, ու ձեզի պատմէ» : Յովհ . ԺԳ .  
 7, 15 :

Հին ատենը հաւատացեալները Հօր Եստու-  
 ծոյ շնորհակալութիւն կ'ընէին, որ անիկայ «Իր  
 բարի Տողին» (Նէէճ . Թ . 20) իրենց նախա-  
 հայրերուն տուեր էր, ու Արդին կամ դերա-  
 դոյն իմաստութեան վրայ խօսելով՝ անոնք մեղա-  
 ւորներուն կը ծանուցանէին, թէ «Եթէ անոր  
 յանդիմանութեանը դառնան, անիկայ իր Տո-  
 գին անոնց վրայ պիտի թափէ» : Եսայ . ԳԳ . 23 :  
 Աւրեմն անոնք ալ մեզի պէս կը հաւտային թէ

աս հոգին հաւասարապէս հօրմէն և Որդիէն  
կը բղխի : Ես զոուցուածքը Եբրայեցոց շատ  
ընտանի ըլլալուն համար , կ'երեւայ թէ անիկայ  
իրենց հին նահապետներէն առեր են , ու անոնք  
ալ այնպէս կը խօսէին ու կը հաւտային , ինչպէս  
որ Եւեոարանին ժամանակը կը խօսուի ու կը  
հաւտացուի : Ուրեմն ճշմարիտ է թէ Բրօթէս-  
թանդներուն վարդապետութիւնը աշխարհքիս  
չափ հին է :

Բրօթէսթանդներուն պաշտամոհանքին հին  
ըլլալը :

Պինտ հին ժամանակէն 'ի վեր կը սորվեցու-  
նէին թէ կրօնական պաշտամունքին մէկ հատիկ  
նպատակը ճշմարիտ Եստուածը ըլլալու է : Ե-  
ռաքեալներուն , մարգարէներուն և նահապետ-  
ներուն սորվեցուցած ու գործածած օրէնքը և  
կանոնը ասիկայ էր : Ենոնք միայն ճշմարիտ Եստ-  
ուածը պաշտեցին • ու մենք ալ աս վարդապե-  
տութեանը հետեւելով կը մերժենք բոլոր ան  
պաշտամունքները , որոնց որ նպատակը արա-  
րած է , թէ և անիկայ շատ գերազանց ըլլայ :  
Հին Կտակարանին մէջը արարածոց տրուած  
պաշտամունքի մը նշանը բնաւ չ'գտնուիր : Ընդ-  
հակառակն Եստուած մարգարէներուն և Եռաք-  
եալներուն բերնովը յայտնապէս անիկայ կ'ար-  
գելէ • և արդեօք կայ Սինայ լեռանը վրայ տրե-  
ուած պատուիրանէն աւելի յայտնի արգելող

պատուիրան մը, «Դուն քեզի կուռք չ'ըննս, ոչ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. Ենոնց երկրպագութիւն չըննս, ու զանոնք չ'պաշտես» : Այլց. Ի. 4, 5 :

Երբոր Առաքեալները մէկ տեղ ժողովուեցան մատնիչ Յուդային յաջորդը ընտրելու համար, արդեօք որոնն աղօթք ու աղաչանք ըրին, մարդարէններոնն նահապետներոնն թէ հրեշտակներուն. չէ, անոնք միայն երկնից Աստուծոյն աղօթք ըրին : Ենոնք մէկ տեղ կը ժողովուէին հաղորդութիւն ընելու համար : Աստուծոյ խօսքը լսելու համար, ու աս ժողովներուն մէջը աղքատաց համար ալ ստակ կը ժողվէին : Ահա Բրօթէսթանդներուն գործածած կրօնքն ալ անոնց նմանն է :

Յիրաւի Սողոմոնի տաճարին մէջը Քերովբէներ կը տեսնուին՝ որ իրենց թւերովը կը ծածկեն, ու զարդի պէս դրուած են. բայց բնաւ չենք կարգացած թէ Իսրայէլացիք անոնց պաշտօն մը մատուցած ըլլան : Ենոնք իրենց խունկերը ու ծխանելիքները միայն Աստուծոյ կը մատուցանէին : Գաւիթ ու միւս մարգարէները երգեր ու օրհնութիւններ շարադրեցին, որ եկեղեցին ինչուան հիմա անոնք իրեն պաշտամունքին մէջը կը գործածէ. բայց անոնց մէջը ամենևին անանկ մէկ պարբերութիւն մը կամ խօսք մը չըկայ, որ շիտակ կամ կերպով մը մէկ արարած մը

օգնութիւն կանչէ . ան երգերուն բոլոր խօսքերը  
 Երարչին կը վերաբերին : Մեր տաճարները  
 նոյն սրբազան օրհնութիւններովը կը խօսին ,  
 ինչպէս որ երբեմն Սողոմոնի տաճարը ու Իսրայ-  
 յէլի Հին ժողովրդանոցները :

Իսրայէլացիները երբոր քառսուն տարի անա-  
 պատին մէջը թափառական պառտեցան , հզօր ու  
 կարող Եստուածը միայն օգնութիւն կանչեցին .  
 ու երբ որ ոմանք ոսկեղէն հորթ մը կանգնեցին՝  
 Իսրայէլի Եստուծոյն անուամբը պաշտելու հա-  
 մար , իսկոյն պատժուեցան : Եստուած անոնց ու-  
 ղիղ դիպատորոյն ինքնը , անոնց հոտոր պտու-  
 շոյն ինքնը ամենևին չնայեցաւ : Ուստի մենք ալ  
 այնպէս կը հաւտանք , թէ խիստ մեծ մեղք գոր-  
 ծած կ'ըլլանք , թէ որ Եստուածութիւնը ձեռով  
 կամ կերպարանքով մը պաշտելու ըլլանք :

Նահասպետներուն զաւակները , որ Եդիպտո-  
 սի մէջ շատ խեղճութիւն կը քաշէին , ու աղիւսի  
 և կղմինտրի բռներուն տակը կը ճզմուէին , միթէ  
 երբէք աղաղակեցին , « Սուրբ Երրահամ , Սուրբ  
 Իսահակ , Սուրբ Ենովք , մեզի ողորմեցէ՛ք , մեզ  
 ազատեցէ՛ք » , չէ : « Իսրայէլի որդիքը » , կ'ըսէ  
 Սովսէս , « ծառայութեան պատճառաւ հառաչե-  
 ցին ու աղաղակեցին . . . և անոնց աղաղակը  
 Եստուծոյ ելաւ » : Ելեց ք . 23 : « Նոյ սեղան  
 մը շինեց Տէրովը » : Ծանոյ . ք . 20 : Եդամ ի-  
 բէն իյնալէն ետքը հրեշտակներէն օգնութիւն  
 չխնդրեց , թէպէտև ամօթով ու խայտառա-  
 կութիւնով լեցուեցաւ , սակայն այսու ամենայ-

նիւ ինքզինքը անոնց միջնորդութեանը չյանձնեց, միայն Աստուած իրեն օգնութիւն կանչեց, վասն զի ճշմարիտ ու օրինաւոր պաշտօնը ասիկայ է: Ուստի Բրօթէսթանդներուն հաւատքը թէ իրեն պաշտամունքին կողմանէ, և թէ իրեն վարդապետութեանը կողմանէ, աշխարհիս սինս հին հաւատքն է, և անոր հեղինակը նոյն ինքն Աստուած է:

Մենք հիմա պիտի հաստատենք, թէ անոր բարոյականն ալ նոյնչափ յարգի է:

Բրօթէսթանդներուն բարոյականութեանը հին

ըլլալը:

Ան բարոյականութիւնը՝ որն որ Յիսուս Քրիստոս լեռանը վրայ ու բոլոր Հրէաստանի մէջ քարոզեց, նոյնը չորս հազար տարի առաջ Մինա լեռը քարի վրայ փորագրեց, որ անիկայ միայն Սուրբ Տապանակին մէջը դրուելու արօնութիւնը ունեցաւ: Բայց արարողութիւնները մերժեց, մեզի հասկըցունելու համար թէ՛ մարմնաւոր արարողութիւնները պիտի վերջանային: Սակայն բարոյական օրէնքը՝ Մովսէսին առաջնորդութեանը տակը ամբողջ պահուելէն ետքը, Աւետարանին տակն ալ մշտնջենապէս պիտի մնայ: Ուստի մեր բարոյականը տասնաբանեայ պատուիրանին մէջ պարունակած ըլլալով, թէ որ մէկը մեզի հարցունէ թէ փրկուե-

լու համար ի՞նչ պէտք է ընել, մենք պիտի պատասխանենք անոր՝ ինչ որ Յիսուս Քրիստոս իրեն ժամանակը այսպիսի հարցմունք մը ընողին պատասխանեց. «Թէ որ կ'ուզես կեանքը մըտնել, պատուիրանքները պահէ՛» : Մատթ. ԺԺ. 17 : Բրօթէսթանդներուն բարոյականութեան կանոնը ասիկայ է :

Ես բարոյականը՝ որ չորս հազար տարի առաջ հրատարակուեցաւ, ուրիշ բան չէր՝ բայց եթէ Բնական Օրէնքին երկրորդ յայտարարութիւնը, ինչպէս որ Եւետարանին բարոյականն ալ ուրիշ բան չէր, բայց եթէ Սոլիստական Օրէնքին երկրորդ յայտարարութիւնը կամ ծանուցումը :

Սակայն թէ որ մարդկային բնութիւնը աւրուած չըլլար, աս օրէնքներուն առջի բնագիրը գտնալու համար՝ պէտք չէր կարդալ ո՛չ Եւետարանը և ո՛չ Տասնաբանեայ պատուիրանը. բաւական էր որ աչքերնիս բանայինք : Բնութեան գիրքը մեզի կը ճանչցնէր Երարչին յաւիտենականութիւնը, կարողութիւնը, անչափութիւնը, իմաստութիւնը, նախախնամութիւնը, արդարութիւնը, և հետեւաբար միայն անիկայ պաշտելու, և անոր երկրպագութիւն ընելու հարկը : Թէ որ անկէ ետքը մեր սրտին մէջը իջնայինք, որն որ մէկ ուրիշ գիրք մըն է բնութեանէն մարդոց տրուած, մենք հոն տեղը գրուած կը տեսնայինք մեզ կառավարելու շատ վայելուչ ու պիտանի կանոններ : Ես գիրքը մեզի կը սոր-



Վեցրնէ, թէ մենք մեր նմանները մեր անձին պէս սիրելու ենք: Բայց երբոր առաջին մարդը իր սրբութեան վիճակէն ինկաւ, ու իրմով բոլոր մարդկային ցեղը աւրուեցաւ, բնութեան լոյսը սկսեց մթննալ, վարքի պարզութիւնը խանգարել, ու երբոր խղճմտանքի ձայնին ականջ դրնողները, ու բնութեան վկայութեանը աչքերնին բացողները քիչցան, ու երբոր մարդուն սիրտը կնքած գիրք մը, ու արարածները անձանօթ նշանագիրներ եղան, Արարիչը՝ ան ամենիմաստ ու ամենաբարի Աստուածը, մէկ նոր գրուածք մը գործածեց իրեն օրէնքը հրատարակելու համար: Անիկայ փոքրիկ ու գիւրին գործածելու քարերու վրայ համառօտաբար փորեց բոլոր ան օրէնքը, որն որ արդէն աստղերուն և տարերքին վրայ, ու մարդոց սրտին մէջը փորեր էր: Ուրեմն մեր բարոյականը երկինքի ու երկրի ու մարդկային սրտին չափ հին է: Միթէ աս բարոյականը ամէն դարերուն բարոյականը չէ՞, որ կը պատուիրէ՝ թէ մենք ուրիշներուն ընենք ան բանը, որն որ կ'ուզենք որ ուրիշները մեզի ընեն: Միթէ աս օրէնքը ամէն մարդոց սրտին մէջը փորուած չէ՞: Աս օրէնքը մեզի մեծ ցաւ զգալ կու տայ, երբոր մեր կարօտութեան մէջը՝ օգնութիւն ընելու կարողութիւն ունեցողները մեզի օգնութիւն մը չեն ըներ: Ուստի մեր բարոյականին նոր ըլլալը հաստատելու համար, պէտք է հաստատել՝ թէ երկինք ու երկիր, և մարդուն սիրտն ալ նոր ստեղծուած են: «Ար-

կինքը՝, կ'ըսէ Դաւիթ, «Մտուածոյ փառքը կը պատմէ» : Սաղմ. ԺԺ. 1 : Պօղոս կ'ըսէ, Մտնք «որ օրէնք չունին . . . իրենց անձերուն օրէնքը բուն իրենք կ'ըլլան՝ . . . որ օրէնքին գործքերը իրենց սրտին մէջը գրուած կը ցուցնեն՝ իրենց խղճմտանքին վկայութեամբը, և իրենց խորհուրդներուն իրար յանդիմանելով և կամ թէ իրաւունք տալովը» : Հաղմ. ք. 14, 15 : Յիսուս Քրիստոս նոր բարոյական մը չբարոզեց, երբոր զրկողութիւնը, մարմնական ցանկութիւնը, պարապ երգումը, թշնամիքը ատելը արգիլեց . անիկայ միայն հին պատուիրանքները կենդանացուց, վասն զի վնասակար թարգմանութիւն մը կամ մեկնութիւն մը անոնք թուլցուցեր էր : Մնիկայ չըսաւ թէ «Մոջիններուն ըսուեցաւ, Տէրոջը կամ մարգարէներուն ձեռքովը» : Հապա պարզաբար ըսաւ «Մոջիններուն ըսուեցաւ, բարեկամը սիրես, ու թշնամիդ ատես, բայց ես ձեզի կ'ըսեմ» : Չեր թշնամիները սիրեցէք, և այլն : Աս խօսքով ան թուլցած բարոյականին հեղինակները կը պալատարակէ, վասն զի անոնք սո.տ վարդապետի պէս առջի օրէնքը այլայլեր էին :

Իրօվիտիանդիկոնաւն արարողութիւններուն հին ըլլալը :

Աս արարողութիւնները խիստ պարզ են, որոնք աս երկուքն են . Մկրտութիւն, և Հաղոր-

դուժիւն: Մկրտութիւնը կ'ըլլուի միայն ջուրով «Տօրը, Արդիին ու Սուրբ Հոգիին անունովը», ինչպէս որ Յիսուս Քրիստոս պատուիրեց: Հաղորդութեան մատակարարութեանը մէջը հացը ու գինին կ'օրհնուի, ու բոլոր հաղորդուողներուն երկուքէն ալ կը տրուի, ինչպէս որ աս ալ Յիսուս Քրիստոս պատուիրեց: Ու որովհետեւ աս երկու արարողութիւնները Յիսուս Քրիստոսի հրամանովը հաստատուեցան, անոր համար ասոնք հազար ութը հարիւր տարուան արարողութիւններ են: Աւթեպէտեւ հին Հրէից ու Բրթթէսթանդներուն արարողութիւններուն մէջը տարբերութիւն մը կայ, բայց անոնք իրարու շատ մեծ վերաբերութիւն ունին, երկուքին ալ նպատակը մէկ է: Հրէից արարողութիւնները ու խորհուրդները գալու Մեսիային նշանակ էին. մեր արարողութիւնները մեզի անիկայ եկած կը ցուցունեն: Եւջի արարողութիւնները խոստացուած ճշմարտութիւնը կը նկարագրէին. երկրորդ արարողութիւնները կատարուած ճշմարտութիւնը կը ցուցունեն: Ուստի աս պատճառաւ պէտք էր որ արարողութիւններուն մէջը տարբերութիւն մը գտնուէր, ինչպէս որ քաղաքական գործքերու մէջ պարտքի թուղթին ոճը՝ վճարուած պարտքի թուղթին ոճէն տարբեր է: Եւ ինչպէս որ հեռու տեղ մը բնակող բարեկամնիս երբոր մեզի գայ՝ ալ մեջերնիս եղած նամակագրութիւնները ու մարզու ձեռքով խօսիլը կը դադրի, բոլոր չհասկըցուած

գրութիւններնիս կը մեկնուին, ու ալ բերան բեր-  
 նի խօսելով՝ գրիչի կարօտ չենք ըլլար, այսպէս  
 ալ Յիսուս Քրիստոսի մեզի դալովը՝ Հին կտա-  
 կարանին խորհրդաւոր զրուածքները, պատգամ-  
 ներուն մթութիւնը մեկնուեցան, ու նմանու-  
 թիւններուն և արարողութիւններուն գաղանի  
 նշանակութիւնը վերջացաւ. ասոր համար մեր  
 արարողութիւնները Մովսիսական արարողու-  
 թիւններէն աւելի պարզ ու աւելի հոգեւոր են :  
 Ուրեմն մի և նոյն կրօնքի մէջ, որուն հիմը մի  
 և նոյն Աստուածն է, ու որ մի միայն Միջնորդ, մի  
 միայն միջոց փրկութեան, մէկ հաւատք մը, ու  
 միայն մէկ անուն մը ունի՝ որով կրնանք փր-  
 կուիլ. ու նաև մի միայն նպատակ պաշտամուն-  
 քի, ու մէկ բարոյական մը ունի, զարմանալու  
 բան չէ որ արարողութիւնները Քրիստոսի մար-  
 դեղութենէն առաջ ու ետքը տարբեր գտնուին :  
 Միթէ մենք ամէն օր չենք տեսնար՝ որ արևուն  
 զանազան բարձրութեանը համեմատ շուքերը ա-  
 ւելի երկայն կամ աւելի կարճ են : Երբոր արե-  
 դակը մեր ետեւն է, կը տեսնանք որ ամէն տեղ  
 շուքերը մեզմէ առաջ կ'երթան. ու երբոր մեր  
 առջևն է՝ շուքերը ետ կը դառնան ու մեր ետեւն  
 կու գան : Այսպէս ալ Հին կտակարանին խոր-  
 հրդաւոր այլաբանութիւնները ու մթութիւն-  
 ները շուքերու պէս էին, որ մեր նախահայրերը  
 անոնք իրենց աչքին առջևը ունէին, վասն զի  
 շնորհաց արևը հեռուէն անոնց ետեւն կու գար :  
 Բայց այսօր որ Բրօթէսութանդները Յիսուս Քր-

ըխտոսին ուրիշ կերպով կը նային, ու «Աոյսը, . . . որ աշխարհ եկող բոլոր մարդիկը կը լուսաւորէ» (Յովհ. Թ. 9) անոնց աչքը լուսաւորեց, ու որ անոնք աս աստուածային աստղը իրեն կէսօրին ծագած ատենը կը տեսնան Աստուծոյ մեծութեանը աջ կողմը, ո՛չ միայն շուքը մէյմըն ալ անոնց առջևէն պիտի չերթայ, հապա նաև անոնց ետևէն հեռուանց պիտի երթայ, կամ մանաւանդ բոլորովին անյայտ պիտի ըլլայ. վասն զի երբոր արևը իր կէսօրուանը վրայ է, ու մեր գլխոյն վրայ շիտակ կը ծագէ, ամէնքը կը լուսաւորուին ու ամենեւին շուք չըլլար:

Արեմն ճշմարիտ է, թէ նոյն Աստուածը՝ որ մեզ քրիստոնեայ Ռօթէսթանդ այսինքն մոլորութեան դէմ զնոզ ըրաւ, ինքը հիներն ալ հաւատացեալ ըրաւ. ու թէ որ դարերը արարողութիւնները փոխեցին, հաւատքը չփոխեցին: Ալ թէպէտ հիները ու մենք մի և նոյն ժամանակի մէջ չեկանք, բայց մի և նոյն լուսով լուսաւորուեցանք: Ալ աս բանին մէջը մենք աւելի օգուտ ունեցանք. քանզի մենք կը ժառանգենք ան, որն որ անոնք կը յուսային. մենք «Ան գալու բարիքներուն . . . բուն կերպարանքը» (Նէր. Ժ. 1) ունինք, բայց անոնք միայն շուքը ունէին, մենք բուն իսկ մարմինը ու ճրշմարտութիւնը ունինք, բայց անոնք միայն օրինակը կամ ձևը ունէին: Սակայն միշտ մի և նոյն հաւատքն է՝ որ հիմա առջինէն աւելի հոգևոր ու լուսաւոր է: Ալ զարմանալին ան է որ աս հաւ

ւատքը՝ որ աշխարհքիս հետը սկսաւ, երկրիս վրայէն ամենեւին անյայտ չեղաւ, ու մինչև դարերուն վերջը պիտի չըլլայ, ու պիտի չոչնչանայ, հապա երկրէս երկինքը պիտի անցնի, որպէս զի ան տեղը մշտնջենապէս դաւանուի, ու մենք հիմա աս բանը պիտի հաստատենք :

Իրօթէսթանդներուն կրօնքին հղանջէնսոր

ըլլալը :

Իրօթէսթանդներուն կրօնքը իրեք այլ և այլ դրութիւններ ունեցաւ : Եռաջին դրութիւնը Եդամէն կը սկսի, ու ինչուան Սովսէս կը հասնի. ու ասիկայ բնական օրէնքին ժամանակն է : Երկրորդը՝ Սովսէսէն ինչուան Յիսուս Քրիստոսը կը հասնի, ու ասիկայ գրաւոր օրէնքին ժամանակն է : Երրորդը՝ Յիսուս Քրիստոսէն ինչուան մեզի կու գայ, ու ասիկայ շնորհաց օրէնքին ժամանակն է. բայց չէ թէ որ շնորհքը ճիշդ ան ատենը սկսաւ, հապա Քրիստոսի աշխարհք գալովը առաւել յայտնի եղաւ : Մենք հիմա աս իրեք դրութիւններուն մէջէն անցնելով, պիտի հաստատենք թէ՛ Իրօթէսթանդներուն կրօնքը Եդամէն ինչուան հիմա շարունակ տեւց : Եռաջին մարդը մեզը գործած ատենը կրօնքին մէջը ամենեւին փոփոխութիւն մը չըրաւ. անիկայ ճիշդ ան ատենէն միայն մէկ Փրկիչ մը ունեցաւ, ինչպէս որ առաջ միայն մէկ Արարիչ

մը ունէր : Ու աս բանը կը հաստատեն ան սեղանները , որ անոր զաւակները Տէրոջը նուիրեցին . ու նաև ան պատարագները , որ անոնք Տէրոջը մատուցին : Եբէլ ու Սէթ՝ Եդամին զաւակները բարեպաշտ էին : Ենովս Սէթին տղան , որ միայն ճշմարիտ Եստուածը պաշտեց , ինը հարիւր հինգ տարի ապրեցաւ , որուն Եստուած ինքզինքը յայտնեց «Տէր» (Չանդ . 4 . 26) անունովը . ինչպէս որ Եբրահամին ինքզինքը ճանչցուց «Եմենակարող Եստուած» (Չանդ . 1 . 1) անունով . ու Սովսէսին՝ «Եէհովա» (Ելեց 4 . 2, 3 .) անունով . ու մեզի «Հայր» (Հրովհ . 7 . 15 .) ըստած քաղցր անունով : Եսիկայ մինչև Նոյի ժամանակը ապրեցաւ : Եւ Նոյ Տէրոջ առջևը շնորհք գտնելէն , ու անոր հետը քալելէն ետքը (Չանդ . 4 . 8) իբրև 2060 թուականին մեռաւ : Եբրահամ Նոյին մեռնելէն վաթսուն տարիի չափ առաջ ծնաւ . Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ , թէ անիկայ Տէրոջը սեղաններ կանգնեց , ու Տէրը անոր հետ ուխտ ըրաւ : Կրօնքը Եբրահամին ընտանիքէն անարատ Իսահակին ընտանիքին անցաւ , ետքը Յակոբին ընտանիքին . պինտ ետքը տասներկու նահապետներուն ընտանիքներուն անցաւ , որոնք տասներկու ցեղերուն գլուխներն էին , ու Եգիպտոսի մէջ այնչափ շատցան՝ որ Փարաւոն թագաւորին վախ տուին , ու Փարաւոն խստութիւնով անոնք իրեն ծառայ ըրաւ : Ենոնք Տէրոջը աղաղակեցին , ու անիկայ Սովսէսը անոնց ազատիչ հա-

նեց : Ու ահա՛ մենք աս կերպով Քրօթէսթանդ-  
ներուն կրօնքը ամենեին չկորսնցունելով՝ երկ-  
րորդ դրութիւնը հասանք : Հիմա տեսնանք թէ  
արդեօք Սովսէսէն ինչուան Յիսուս Քրիստոսը  
անանկ ժամանակ մը գտնուեցա՞ն, որուն մէջը  
կարենանք ըսել՝ թէ Եստուած ճշմարիտ երկր-  
պագողներ չունեցաւ :

Սովսէսէն ինչուան Գաւթի կրօնքը դատա-  
ւորներուն կառավարութեան տակը շարունակ  
պահուեցաւ . ու Գաւթիէն ինչուան գերութիւ-  
նը Երուսաղէմ՝ իրեն տաճարը ու իրեն սեղան-  
ները պահեց : Իրաւցունէ՛ Իսրայէլի թագա-  
ւորներուն պինտ իմաստունը կռապաշտութեան  
առաջին չար օրինակը տուաւ . բայց Իսրայէլի  
մէջ , մանաւանդ Յուդային ու Բենիամինին ցե-  
ղերուն մէջը միշտ գտնուեցան բազմաթիւ հա-  
ւատացեալներ՝ որ կուռքերուն բնաւ զոհ չմա-  
տուցին : Ու թէ որ քանի մը ամբարիշտ թագա-  
ւորներ քիչ մը ատեն արտաքին պաշտամունքը  
խափանել կըրցան ալ , բայց սակայն սրտին պաշ-  
տամունքը բոլորովին չոչնչացուցին : Միշտ  
գտնուեցան անանկ հողեոր մարդիկներ , որ հա-  
սարակաց մոլորութեան ու ապականութեանը  
դէմ բրօթէսթ՝ այսինքն մերժողական յայտա-  
բարութիւն ըրին : Ընօրէն Յեղարէլին օրը ան-  
գա՛ Իսրայէլին մէջը եօթը հազար Քրօթէս-  
թանդներ կային , որ Բահաղին առջևը բնա-  
ծունկ չէին չոքած : Դ թ՝ 18 : Գերու-  
թեան ատենը Յութային ցեղը ամենեին կռա-



պաշտներուն հետ չխառնուեցաւ . ու ան ատե-  
նը անանկ մարգարէներ ունեցաւ , որ իրեն նո-  
րէն հաստատուիլ ու ազատուիլը իրեն մարգա-  
րեացան . ու Հրէաստան դառնալէն ետքը մինչև  
Յիսուս Քրիստոսի գալուստը՝ իրեն թագաւոր-  
ները մէյ մըն ալ նորէն կռապաշտութեան մէջ  
չինկան : Ու ասանկ Ադամէն ինչուան Յիսուս  
Քրիստոսը Բրօթէսթանդներուն հաւատքը բը-  
նաւ վայրկեան մը աչքէ չվերցաւ :

Հիմա երրորդ դրութիւնը քննենք ու նայինք ,  
թէ ան երկու առջի դրութիւններուն մէջը երե-  
ցած յայտնի կրօնքը ասոր մէջը ինչ վիճակի հա-  
սաւ : Օգոստինոս թ՝ Սաղմոսին մեկնութեան մէ-  
ջը իրեք աստիճան հալածանք կը նկարագրէ , որ  
աս վերջին դարուն մէջը Ակեղեցին պիտի նեղե-  
ին՝ հաւատքը կործանելու և սէրը վերցունելու  
համար : «Առաջին հալածանքը , կ'ըսէ , խիստ  
սաստիկ եղաւ . ու աս հալածանքը արսորի ու  
մեռցունելու վախով առաջին քրիստոնեաները  
կը ստիպէր՝ որ կուռքերուն զոհ մատուցանեն :  
Երկրորդ հալածանքը՝ աւելի խորամանկ ու խա-  
բէական կերպով կ'ըլլայ , որ հերետիկոսապետ-  
ները ու սուտ եղբայրները ամէն օր կը գործա-  
ծեն : Երրորդը առջիններէն աւելի վտանգաւոր  
է . վասն զի անոր մէջը կը գործածուի միանգա-  
մայն բռնութիւն , վարպետութիւն , ոյժ , իշխա-  
նութիւն , ու սուտ հրաշքներու խաբէութիւն .  
և ասիկայ պիտի ըլլայ , կ'ըսէ , «Աեռին հալա-  
ծանքը» :

Եռաջին հալածանքը իրեք հարիւր տարի քշեց՝ երկրորդը ամէն ատեն կ'ըլլայ • երրորդը՝ շատ դարեր են՝ քանի որ սկսեր է • ու աս հալածանքն է՝ որ Քրիստոսի եկեղեցիին մէջը շատ վնասակար աւերմունքներ ըրաւ ու տակաւին կ'ընէ : Համբարձումէն քիչ մը ատեն ետքը , հաւատացեալները այրերու և երկրին խոռոչներուն մէջը կը պահուրտէին , բուն անանկ սաստիկ հալածանքի ատեն իրենց Երարչին անունը հոն օրհնելու համար : Կրօնքը իրեք հարիւր տարի հալածանք քաշելէն ետքը՝ ամենեւին չտկարացաւ ու չաւրուեցաւ • հապա այրերէն ու խոռոչներէն դուրս ելաւ , ու հին մարդարէներուն բերած պատգամներուն պէս , աշխարհքիս մէջը մեծութիւնով ու գերազանցութիւնով բարձրացաւ : Ենիկայ աշխարհքիս առաջին ակոռին վրայ ելաւ նստաւ • ու տէրութիւնները՝ որ անիկայ կը հալածէին , իրենց կամօքը Խաչեալ Աստուծոյ Որդւոյն ծառայութեանը դարձան , որուն Սուրբ Ենունը առաջ կը հայհոյէին :

Աս յաղթանակով՝ քրիստոնէութիւնը թէպէտև դուրսի թշնամիներէն ազատեցաւ , բայց պարտաւորեցաւ որ ներսի թշնամիներուն դէմ պատերազմի • ինչու որ հաւատացեալներուն մէջք քանի մը ամբարտաւան ու պարծենկոտ մարդիկներ ելան , որ իրենց անունը զուրցունել ուզեցին : Եսոնք Եկեղեցին մոլորեալ ու գայթակղեցունող կարծիքներով նեղեցին • մէկը Աստուծոյ Որդին յաւիտենական Աստուածութիւնը

կ'ուրանար, ու միւսը կը ջանար՝ որ անոր մարդ-  
 կութիւնը ոչինչը հանէ, ու անիկայ երեւկայա-  
 կան շուքի նմանցունէ. ոմանք ալ փրկութեան  
 խորհուրդը ու շնորհքին հարկաւորութիւնը կը  
 ոչնչացունէին: Բայց ասանկ ալ՝ Եկեղեցին  
 Աստուծոյ շնորհքով՝ իրեն վարդապետներուն  
 իմաստութեան միջոցովը աս երկրորդ փորձու-  
 թենէն ալ ազատեցաւ. ինչպէս որ առջինէն  
 խալսեր էր՝ մարտիրոսներուն քաջասիրտ համբե-  
 ըութիւնովը: Բոլոր աս մոլորութիւնները՝ քանի  
 մը դարեր իրար անցունելէն ետքը՝ անյայտ եղան,  
 ու Եկեղեցին իրեն առաջին հիմերուն վրայ հաս-  
 տատ մնաց: Ահա մենք հիմա՝ Սեռին հալածանքին  
 հասանք, որն որ ան իրեք հալածանքներուն  
 պինտ երկայն քշողը ու պինտ սոսկալին է: «Ա-  
 նորէնութեան Սարգը» գալէն ու շատ բարձրա-  
 նալէն ետքը, քանի մը դար Աւետարանին ճշմար-  
 տութիւնը մարած կամ ընկղմած երեցաւ, ու  
 դուրսէն չէր տեսնուեր. բայց ասանկով ալ ա-  
 նորէնութեան խորհուրդը կատարուելէն ետքը,  
 ինչուան Բարեկարգութեան օրը անանկ ժամա-  
 նակ մը չեղաւ՝ որ յաւիտենական Աւետիսը ու-  
 նեցող ու երկինքին մէջը թռչող հրեշտակ մը,  
 (Յայտ. Ժ. 6,) ու քանի մը նախանձաւոր հո-  
 վիւններ ու հաւատացեալներ չ'գտնուին կռա-  
 պաշտութեան դէմ պատերազմելու՝ և անոր  
 յառաջագիմութիւնը խափանելու համար:

Աս ճշմարտութիւնը աւելի բացայայտ կերպով  
 հասկըցունելու համար, մենք նոր ծնած՝ Սեռու-

Թիւնը, մեծցած ու կատարեալ Վեռութենէն պիտի որոշենք: Թէ որ ամէն քրիստոնեաները վեցերորդ ու եօթներորդ դարուն ատենները ընկղմած գանուէին ան խաւարին մէջը, որն որ մեր քարեպաշտ ու քաջասիրտ Բարեկարգողները յաջողութիւնով ցրուեցին մեր օգուտին համար, ան ժամանակը պէտք էր ըսել թէ՛ Բրօթէսութանդներուն կրօնքը ու ճշմարտութիւնը շատ դարերէն ՚ի վեր աշխարհիս վրայէն աքսորուած էր: Բայց անանկ չեղաւ, վասն զի Վեռը իրեն կրօնքը ու իրեն տէրութիւնը հաստատելու համար, ու «Մնօրէնութեան մարդը» ճշմարիտ Եստուծոյն տաճարին մէջը նստեցունելու համար՝ շատ դարերու կարօտ եղաւ: Թէ որ Վիկիա ըսուած քաղաքին մէջը, եպիսկոպոսներու ու քահանաներու ժողով մը վճռեց, թէ պէտք է փայտին ու քարին առջևը ճնրադրութիւն ընել, ու «յարգել և կրկրպագանել» բառերուն մէջը խտրութիւն ընողները նղովել, նոյն ժամանակները կոստանդնուպօլիս ալ մէկ ժողովք մը եղաւ, որն որ Վիկիական ժողովքին աս վարդապետութիւնը դատապարտեց\*: Մեծն կարողոս, ութերորդ դարուն մէջը, Քրանքֆօրթի մէջ ժողովք մը ընել տուաւ, ու ան ժողովքը Վիկիոյ ժողովքը նղովեց, ու պատկերներուն սուտ պաշ-

\* Յատի Տեառան 792. կրեմաթի ժողովքն ալ պատկերաց պաշտարանն էր դատապարտուեց:

տօնը բոլորովին դատապարտեց \* :

Ես վէճը իններորդ դարուն մէջը վերջացաւ ,  
ան ատենը աւելորդապաշտ Թէոդորան ու Հը-  
ռովմայ Եպիսկոպոսը աս սուտ պաշտօնը նորէն  
յայտնապէս հաստատեցին , ու քրիստոնէութիւ-  
նը կռապաշտներով շատցուցին :

Ես իններորդ դարուն մէջ , երկրիս մէկ կողմը  
Հռովմայ մօտ մէկ քիչուոր ժողովուրդ մը գրտ-  
նուեցաւ՝ որ Վէոնեանք կը կոչուէր , որ Եստու-  
ծոյ կը ծառայէր՝ անոր Եւետարանին մաքրու-  
թեանը հետևելով , ինչպէս որ նոյն իսկ Տրի-  
տենդեան ժողովքին պատմիչը կը հաստատէ : Ես  
ժողովուրդը Թուրինցի Կղոզիոսին աշակերտ-  
ներն էին , որն որ Հռովմէական Եկեղեցիէն  
զատուեցաւ՝ պատկերներուն երկրպագութիւն  
ընելը ու Սուրբերուն աղօթք ընելը մերժելով :  
Եսիկայ յայտնի բան է , որ երբոր պատկերնե-  
րուն երկրպագութիւն ընելը բոլորովին հաս-  
տատուեցաւ , աս ժողովուրդը միայն ճշմարիտ  
Եստուածը կը պաշտէր : Ե՛հա՛ ուրեմն Բրօթէս-  
թանդներուն կրօնքը ինչուան իններորդ դարը  
միշտ յայտնի կ'երևար :

Իններորդ դարէն ետքն է՝ որ բաժակը ժողո-  
վուրդին տալէն կտրեցին , Քրիստոսի յայտնի  
պատուիրանին դէմ դնելով , թէ « Եմէնքդ ալ  
խմեցէ՛ք ատկէ » . ( Մատթ . ից . 27 . ) ու նոր քա-

\* Կարողոս աս հոլորո-վեան դէմ իր անոնովը  
Բէկ գիրք Տը հրատարակեց :

հանաներ, ու նոր պատարագներ նարեցին: Հին հալածանքները նորոգեցին, մարդիկները կը կախէին, կը մոռթէին ու կ'երէին: Բայց ասանկ ալ մենք Վէոնեանները ամէն դարու մէջ ինչուան տասնուհինգերորդ դարը աւետարանական հաւատքին մէջը հաստատ կը գտնանք. և միայն անոնք չէին՝ որ կռապաշտութեան դէմ մաքառեցան: Յամի Տեառն 826, Վալէֆրիտ անունով Ուէնթ Վալլիէնցի քահանան, մէկ աղօթքի ու պաշտամանց դիրք մը շարադրեց. ու անոր մէջը աւելորդ արարողութիւնները, պատկերները, ու անձանօթ լեզուով աստուածային ծառայութիւնը բացարձակապէս կը դատապարտէ: Յամի Տեառն 992, բոլոր Գաղղիական եկեղեցին Ռէմսի մէջ մէկ ժողովք մը ըրաւ, ու հոն Երնոլըոս Օրլէանսի Եպիսկոպոսը ու իր ժամանակին պինտ անուանի ճարտարախօսը՝ ան տեղի եղած բաներուն ու իրար անցումներուն վրայ իր կարծիքը զրուցելով ըսաւ թէ՛ «Ես դարուս ամէն Պապ մեծամեծ մեղքերով վատահամբաւ եղեր են, ու բոլոր աստուածային ու մարդկային գիտութեանէն զուրկ են. անոնցմէ պատասխան ուղելը՝ քարերուն խորհուրդ հարցունել է՛»:

Յամի Տեառն 1120. Հոնորիոս Եութունի Եպիսկոպոսը չ'վախցաւ իրեն շարադրած ճառին մէջը՝ Հռովմայ Եպիսկոպոսը ու անոր մարդիկները Յայանութեան մեծ գազանը, ու Բաբելոնը կոչելու: Պարոնիոս՝ իններորդ տասներորդ ու մետասաներորդ դարերուն վրայ դրած

պատմութիւններուն մէջը՝ կ'ըսէ թէ, ան ատենը «Տոովմէական Եկեղեցին իրին գլուխներուն աղտոտութիւնովը աղտոտած էր. ու Քրիստոս նաւին մէջը կը քնանար. ու մարդ չ'կար, որ անիկայ արթնցունէր. (Մատթ. Ը. 24.) և թէ՛ Կարդինալները ու Քահանաները իրենց գլուխներուն գարշելիութեանը հետեւելով՝ կը փափաքէին որ անիկայ միշտ քնանայ»: Եւպեցիներն ալ Եկեղեցիին մէջը մտած նորութիւններուն դէմ բրթթէսթ ըրին. ու աս պատճառով թէպէտև մեծ զրպարտութիւններու հանդիպեցան ու սաստիկ հալածումներ քաշեցին, ու ասոնցմէ երկու հարիւր հազարէն աւելի մարդ կոտորեցաւ, սակայն այսու ամենայնիւ՝ աստուածային նախախնամութիւնը ինչուան Բարեկարգութեան ժամանակը անոնք պահեց պահպանեց: Են ատենը Եւրոպային կէսը Տոովմայ լուծը իր վրայէն նետեց, ու յայտնապէս ճշմարտութիւնը խոստովանեցաւ:

Են ատենէն Տրիտենդեան ժողովքին վճիռներուն դէմ՝ թէ կենդանի ձայնով և թէ գրուածքով՝ բրթթէսթ այսինքն մերժողական յայտարարութիւն ըրին, քանզի անիկայ ատեն ատեն Եկեղեցիին մէջը մտած ու գործածուած մոլորութիւնները կանոնի պէս հաստատեց: Ու աս բրթթէսթային կամ մերժողական յայտարարութեանը պատճառովը Բրթթէսթանդ անունը տրուեցաւ. ահա՛ Բրթթէսթանդներուն Եկեղեցիին մշտնջենաւոր ըլլալը: Ու անիկայ ինչուան

աշխարհիս վերջը պիտի տևէ . քանզի Յիսուս Քրիստոս իրեն եկեղեցիին ըսաւ , «Ես ձեզի հետ եմ մինչև աշխարհիս վերջը» . (Մատթ . իբ . 20) : ու նաև խոստացաւ թէ՛ «Պատիւքին դուռները անիկայ պիտի չ'յաղթեն» : Մատթ . ԺԳ . 18 :

Են ճշմարտութիւնները՝ որ հաւատացեալ քրիստոնեաները Ռարեկարգութենէն առաջ կ'ընդունէին ու կը պահէին , այսօր ալ նոյն ճշմարտութիւններն են . ու մեր օրուան ճշմարիտ Բրոթէսթանդ եկեղեցիներուն վարդապետութիւնը անոնցմով բաղկացած է : Բրոթէսթանդներուն բարեկարգ Եկեղեցիին ու Հոովմայ Եկեղեցիին մէջը միայն ան տարբերութիւնը կայ՝ ինչ տարբերութիւն որ կայ աղէկ մշակուած արտի մը , ու աւելորդ խոտերով լցուած արտի մը մէջ . կամ թէ մաքրուած «Եէեմանին» , ու բորոտութեամբ ծածկուած «Եէեմանին մէջը : Բարեկարգողները կամ Բրոթէսթանդները պապականութենէ զատուեցան , բայց Եկեղեցիէն չ'զատուեցան : Իրաւցունէ Եկեղեցին՝ Պապերուն մթընցընող վարդապետութիւններով անյայտ եղածի պէս էր , բայց պապականութիւնը եկեղեցի չէր : Պապականութիւնը ուրիշ բան չէր , բայց եթէ մէկ հիւանդութիւն մը՝ որ Եկեղեցին կ'ապականէր : Բարեկարգութեան օրը՝ ախտաւոր կամ հիւանդոտ մասը կտրեցաւ . ու հետեապէս պապականութիւնը այսօր Եկեղեցիին մասը չէ : Ես երևելի դիպուածքէն առաջ , Եկեղեցին պապականութեան տակը կը պահուէր , ինչպէս որ



ցորենը որոմի մէջ կը պահուի : Սակ պինտ ճախորդ ժամանակներու մէջ ալ՝ ճշմարիտ Ակեղեցին բաղադրող հաւատացեալ քրիստոնեաներ կը գտնուէին : Աստուած ամենեւին առանց վիշտներու չ'մնաց . ու Ասրայէլի պատմութեանը պինտ ողբալի ատենին մէջն ալ՝ երբոր մարգարէն զինքը միայն հաւատացեալ կը կարծէր , տակաւին եօթը հազար մարդ գտնուեցաւ՝ որ Բահաղին առջևը ծունկ չոքած չէին : Անանկ խոստմունք չեղաւ , թէ Ակեղեցին միշտ բաղմամարդ պիտի ըլլայ . հապա թէ՛ անիկայ բնաւ պիտի չ'կորսուի . անանկ խոստմունք մը չեղաւ , թէ Աւետարանին ճշմարտութիւնները միշտ ամէնքը պիտի ընդունին . հապա թէ՛ ամէն ատեն քանի մը ընտրեալներ պիտի գտնուին , որ անոնք ուղիղ ու անկեղծ սրտով պիտի ընդունին : Օգոստինոս Ակեղեցին լուսինի կը նմանցունէ , որուն բոլորակը յաջորդաբար կ'աճի ու կը նուազի , ու երբեմն կը խաւարի . բայց մարդ մը չ'կրնար անոր գոյութեանը վրայօք տարակուսիլ . անիկայ միշտ իր լրումին մէջը չէ , ու Ակեղեցին ալ միշտ իրեն փառքին պայծառութիւնովը չ'փայլի : Ակեղեցին Բարեկարգութենէն առաջ հիւանդոտ մարդու մը կը նմանէր . երբոր Բարեկարգութիւնը եկաւ , անիկայ ազատեց ան հիւանդութենէն՝ որով կը տանջուէր : Մենք հին վարդապետութիւնները , Սուրբ Վրոց վարդապետութիւնները կը պահենք . ու ամէն նորաձնար վարդապետութիւնները , ու ողջամիտ չեղող վարդապետու-

Թիւնները կը մերժենք : Ինչուան Քարեկարգութեան ժամանակը՝ ոսկին ու աղտոտ մետաղ մը իրարու հետ խառնուած էին, բայց ան ժամանակը անոնք զատուեցան, ու ոսկին մաքուր մնաց :

Միթէ Եստուած իրեն հին պատգամներուն մէջը յաւիտենական ուխտ մը չ'խոստացա՞ւ. ան ճրի ուխտը՝ որն որ ամէն մարդոց հետը պիտի ընէր Քրիստոսի արիւնովը. և թէ անիկայ պիտի ըլլար միայն մէկ նորոգութիւն կամ հաստատութիւն մը նոյն ուխտին, որն որ մեր հին նահապետներուն հետ ըրեր էր : Երբ՝ ան որ յաւիտենական է, չ'կրնար վերջ ունենալ, ուրեմն Քրօթէսթանդներուն հաւատքը երկրէս երկիրքը պիտի անցնի : Ես հաւատքը գլխաւորաբար ի՞նչ բանի վրայ կը կայանայ : Սիրոյ վրայ, «ՔուՏէր Եստուածդ սիրես... ու քու ընկերդ... քու անձիդ պէս» : Եսոնցմէ, կ'ըսէ Յիսուս Քրիստոս, «Կախուած են բոլոր օրէնքները ու մարգարէները» : Մատթ. իբ. 37, 39, 40 : Ես սէրը՝ հաւատքին հոգին է. ու աս հոգին՝ մարդուն հոգիին պէս անմահ է, ու բնաւ պիտի չըլմննայ : Հաւատքը պիտի վերջանայ, ու նաև յոյսն ալ, երբոր մեր հաւատքը տեսութեան պիտի փոխուի, ու երբոր պիտի ժառանգենք ան բարիքը, որն որ մեր յոյսերուն առարկան էր : Բայց սէրը այնպէս պիտի չըլլայ, անիկայ իրեն հիմին պէս յաւիտենական է. վասն զի Եստուած Սէր է : Երկրի վրայ պէտք է որ հաւա-

տացեալը իր Երարիչը ու իր Եստուածը ամէն բանէն աւելի սիրէ, ու իր ընկերը իր անձին պէս, ու Երկինքի մէջ աս կրկին սէրը իրեն զուարճութիւնը պիտի բլլայ :

Են որ Եստուած կը սիրէ, անոր վայելուչ յարգութիւն ու երկրպագութիւն կը մատուցանէ . Բրօթէսթանդներուն աշխարհիս մէջ փնտռածը աս բանն է . ու երկինքի մէջն ալ աս բանը կատարելապէս պիտի ընեն : Հոն ծունկ պիտի չոքին, ու կենդանին յաւիտեանս յաւիտեանից պիտի պաշտեն : Յայտ . դ . 10 :

Են որ Եստուած կը սիրէ, անոր գովելի անունը և անհուն կատարելութիւնները կ'օրհնէ, ու միայն անով կը զուարճանայ . Բրօթէսթանդներուն աշխարհիս մէջ ըրածը ասիկայ է՝ որչափ թր մարդկային տկարութիւնը անոնց թող կու տայ . ու երկինքին մէջը աս բանը կատարելապէս պիտի ընեն :

Են՝ որ Եստուած կը սիրէ, Եստուծոյ սիրած բանը կը սիրէ, Եստուծոյ չ'սիրած բանը կ'ատէ . անիկայ անմեղութիւնը ու շիտակութիւնը կը սիրէ, վասն զի Եստուած անոնք կը սիրէ . անիկայ մեղքը կ'ատէ, վասն զի Եստուած անկէ կը զզուի : Բրօթէսթանդներն ալ աս աշխարհքիս մէջ աս բաները ընելու կ'աշխատին . ու երկինքին մէջը կատարելապէս պիտի ընեն : Եւ որովհետև Եստուծոյ պատուիրանքները պահողները միայն կենաց ծառէն ուտելու իրաւունք պիտի ունենան, ու Սուրբ Բաղաքին դռներէն

պիտի մտնան, ան տեղը թաղաւորելու համար յաւիտեանս յաւիտենից, (Յայտ. իբ. 14, 5,) անոր համար Բրօթէսթանդները կը ջանան որ ան պատուիրանքները պահեն, վասն զի գիտե որ կռապաշաները դուրսը պիտի մնան. ու անոնց մեղքերուն դէմ՝ բրօթէսթ կ'ընեն երկինքին ու երկրի առջևը :

Ուրեմն ճշմարիտ է, թէ մեր սուրբ հաւատքը ամէն կողմանէ կրնայ պարծենալ իրեն ճշմարիտ մշտնջենաւոր ըլլալուն վրայ :


Երդեօք Բրօթէսթանդներուն կրօնքը Քրիստոսի ու անոր առաքեալներուն սորվեցուցած ան հին կրօնքն է. ուրեմն անիկայ՝ նախ ապահով ճամբայ ու ապահով կրօնք մըն է. անով կրնաս արդարանալ, սրբուիլ ու իրաւցունէ փրկուիլ : Ենիկայ ան հին ճամբան է՝ որուն մէջը Պօղոս՝ Պետրոս ու հին ատենի հաւատացեալները յաւիտենական թաղաւորութիւն մը ու պսակ ստացան : Պապականներուն հպարտ ու անհիմն պահանջմունքներէն մի՛ զարհուրի՛ր՝ որ կ'ըսեն թէ իրենց եկեղեցիէն դուրս փրկութիւն չ'կայ : Երկրորդ. Եսիկայ պինտ մաքուր ճամբան է. քանի որ ակին մօտենաս, այնքան ջուրը մաքուր կը դոնաս. քանի որ հեղինակին մօտենաս, այնքան գրուածքը պայծառ կը դոնաս : Երբոր ճամբայ քալես, միշտ կը փնտռես մաքուր տեղերէն անցնիլ. դուն յաւիտենական վիճակի մը հասնելու ճամբուն մէջն ես. և Քրիստոսի ու անոր Եռաքեալներուն սորվեցուցած վարդա-

պետութեանը յարմար մի միայն ճամբան աս է, այսինքն՝ Քրիստոսի վրայ հաւատք ունենալը, մեղքի համար ապաշխարութիւնը, ներքին սրբութիւնը ու նոր շնորհութիւնը. ասիկայ անհին ճամբան է, որով մաքուր ու անարատ սիրտ՝ խղճմտանք և կենցաղավարութիւն կրնանք ունենալ: Երրորդ. Միակայ ամենէն մօտ ճամբան է. թէ որ աս ճամբան ձգես, որչափ յառաջ երթաս՝ այնքան ճամբէդ կը մոլորիս: Չորրորդ. Միակայ պինտ հանգիստ ու պինտ զուարճալի ճամբան է. «Իմաստութեան ճամբաները հաճոյական ճամբաներ են, և անոր բոլոր շաւիղները խաղաղութիւն են»: Կրնայ ըլլալ՝ որ անիկայ դրսուանց նեղութիւններով՝ փուշերով ու տատասկներով տարածուի, բայց ներսուանց խաղաղութիւն և ուրախութիւն է, որուն մէջը հաստատուն, ապահով ու յաւիտենական մտիթարութիւն կայ: Հինգերորդ. Միակայ մի միայն ճամբան է երկինքը երթալու, ու չկայ անկէ զատ ուրիշ: Թէ որ դուն քեզի նոր ճամբաներ շնորհես, կամ թէ ան հին ու աղէկ ճամբուն դէմ՝ ուրիշներէն շնորհած նոր ճամբաներու մէջ քալես, դուն կը կորսնցունես Քրիստոսը ու Մատուած, ու նաև բուն քու հոգիդ յաւիտեան:

Ուրեմն աս աղէկ ու հին ճամբուն մէջը քալէ՛: Թէ որ արքայութեան տանելու ճամբան տեսնաս, ու անոր մէջը չ'քալես, չես կրնար հոն հասնիլ: Կրնայ ըլլալ՝ որ դաղափարով Բրօ-

թէսթանդ ըլլաս ու տակաւին յաւիտեան դա-  
 տապարտուիս : Գինով՝ պիղծ՝ երդմնցող՝ ան-  
 զեղջ ու անհաւատ Բրօթէսթանդ մը՝ գաղա-  
 փարով Բրօթէսթանդ ըլլալուն համար պիտի  
 չփրկուի : Կրնայ ըլլալ՝ որ դուն ուրիշ եկեղե-  
 ցիի մը մէջ պատկերներուն առջին ծունկ չոքե-  
 լով կուսպաշտութեան մեղքը գործելը մերժես ,  
 ու տակաւին դատապարտուած ըլլաս՝ արծաթը  
 կուռքի պէս պաշտելուդ ու աս աշխարհիս չա-  
 փազանց սէր տալուդ համար : Կրնայ ըլլալ՝ որ  
 դուն մարդու մը եկեղեցիին գլուխ ըլլալը չըն-  
 դունիս , ու գաղափարով Քրիստոսը ընդունիս մի-  
 միայն Գլուխ իր Ակեղեցիին , և տակաւին դա-  
 տապարտուած ըլլաս անոր չհաւտալուդ համար ,  
 անիկայ ամենէն առաջին չսեպելուդ , ու ամենէն  
 աւելի չսիրելուդ համար : Թող բոլոր հին  
 ու ապականուած բաները մէկ դի երթան քեզ-  
 մէ , հին տգիտութիւնդ , հին ոչինչ յոյսերդ ,  
 հին անձնասիրութիւնդ , հին սուտ խաղաղու-  
 թիւնդ , հին թշնամութիւնդ Աստուծոյ ու սրը-  
 բութեան դէմ : Մէկ խօսքով հին մարդը խա-  
 չը հանես , մեղքին մարմինը կործանես . որովհե-  
 տե հին սիրտդ պահելդ ու տակաւին երկինքը  
 երթալու յոյս ունենալդ կը ցրցունէ՝ թէ դուն  
 փրկուելու նոր ճամբայ մը կը փնտռես : Մինչե-  
 որ ասանկ չ'նորոգուիս , կրնայ ըլլալ՝ որ դուն  
 հին աղէկ ճամբան գիտնաս , բայց չես կրնար ա-  
 նոր մէջը քալել . ու թէ որ անոր մէջը չ'քալիս՝  
 վայ , վայ , հազարաւոր վայ քեզի յաւիտեան :

Արչափ սոսկալի պիտի ըլլայ ամբարիշտ Ռոթէս-  
 թանդի մը դատապարտութիւնը, որ գիտէր թէ  
 որն է հին՝ աղէկ ու միմիայն ճամբան, ու նաև  
 միշտ կը լսէր ճշմարիտ, պարզ ու զօրաւոր քա-  
 ըրողութիւնները ան վարդապետութիւններուն,  
 որ Քրիստոս ինքը ու իր Առաքեալները հաստա-  
 տեցին, ու նազանդ չեղաւ անոր: Աստուծոյ  
 ու քու հոգիիդ սիրոյն համար, և ասկէց ետքը  
 գալու յաւիտենական ու աննարին տանջանքնե-  
 րէն փախ չելու համար, հաւատքի՝ սրբութեան՝  
 ապաշխարութեան ու նոր նազանդութեան աս  
 հին աղէկ ճամբուն մէջը քալէ՛ :





4997-5005

2013

-5

